

Դիմումատուներ՝

Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ՝
Արթուր Ալբերտի Սաքունց և Արայիկ Միքայելի Զայյան
ք. Վանաձոր Տիգրան Մեծ 59

Պատասխանողներ՝

ՀՀ Հատուկ քննչական ծառայություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 5, 0010

ՀՀ գլխավոր դատախազություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 5, 0010

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ

(ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. հուլիսի 4-ի ԵԿԴ/0043/11/14 գործով
կայացրած որոշման դեմ)

Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

2014թ. հուլիսի 4-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նախագահությամբ դատավոր Հ. Տեր-Ադամյանի (այսուհետ՝ դատարան) քննության առնելով բողոքաբերներ Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զայյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014թ. մայիսի 19-ի որոշման դեմ կայացրել է որոշում վերաքննիչ բողոքը անբողջությամբ մերժելու մասին:

1.Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. ՀՀ զինված ուժերի N գորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, կոչումով շարքային Հայկ Մովսիսյանի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու նպատակով անդամախեղում կատարելու դեպքի առթիվ 2011թ. հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հասկանիչներով ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ:

1.2. 2011թ. նոյեմբերի 29-ին Հայկ Մովսիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռով Հայկ Մովսիսյանը նույն հոդվածով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով:

1.3. 2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում Հայկ Մովսիսյանին գտել են մահացած:

1.4. 2012 թվականի նոյեմբերի 28-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200712 քրեական գործը՝ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության մեկուսարանի կալանավոր Հայկ Արտավազյի Մովսիսյանի ինքնասպանության դեպքի առթիվ:

1.5. 2013թ. ապրիլի 11-ին ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռի դեմ:

1.6. 2013թ. ապրիլի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը կայացրել է որոշում ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին, ըստ որի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Հայկ Մովսիսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով բեկանել է և Հայկ Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ ճանաչել անմեղ և արդարացրել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

1.7. Ըստ նախաքննության մարմնի՝ ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում կատարված նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության աշխատակիցների և քննչական մեկուսարանի կալանավորների, ամբաստանյալների, դատապարտյալների կողմից Հայկ Մովսիսյանի նկատմամբ որևէ սպառնալիք, դաժան վերաբերմունք, հոգեբանական ճնշում կամ բռնություն չի գործադրվել, անձնական արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ չեն կատարվել, այսինքն՝ նրանց արարքներում բացակայում են ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ (ինքնասպանության հասցնելը) և 111-րդ (ինքնասպանության հակելը) հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշները:

1.8. Վերը նշված հիմքով 2013թ. մարտի 18-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչի կողմից որոշում է կայացվել թիվ 12200712 քրեական գործի մասը կարճելու վերաբերյալ:

1.9. Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացրած պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու պատճառաբանությամբ 2013 թվականի մարտի 19-ին որոշում է կայացվել քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու մասին:

1.10. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի 2013թ. մարտի 28-ի որոշմամբ թիվ 12200712 քրեական գործի նյութերով հարուցվել է նոր թիվ 62202513 քրեական գործը Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնական անփութության ենթադրյալ դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Նույն օրը թիվ 12200712 քրեական գործը միացվել է թիվ 62202513 քրեական գործին:

1.11. 2013թ. հունիսի 29-ին վստահորդիս կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, ըստ որի խնդրվել է «..... պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին տրամադրելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը, ինչպես

նան ճանաչել Հեղինե Պետրոսյանին որպես տուժողի իրավահաջորդ սույն քրեական գործով վարույթում ներգրավվելու հարցում»:

1.12. 2013թ. հունիսի 1-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն ,ըստ որի ներկայացված դիմումը ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն: 2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի կողմից կայացվել է որոշում՝ պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

1.13. 2013թ. Հունիսի 27-ին Վստահորդի կողմից ներկայացվել է դիմում ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան խնդրելով՝ 2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Բաբայանի որոշումը վերացնել՝ Հայկ Մովսիսյանին տուժող ճանաչելու, իսկ իրեն՝ տուժողի իրավահաջորդ:

1.14. 2013թ. հուլիսի 16-ին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է որոշում՝ ներկայացված դիմումը մերժելու մասին, դատարանը մերժումը հիմնավորել է հետևյալ կերպ.

ՀՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի և 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների գործողությունների դեմ բողոքը նախ պետք է ներկայացնել դատախազի, իսկ դատախազի կողմից այն չբավարարելու դեպքում նոր միայն կարող է ներկայացնել դատարան:

Դատարանը արձանագրել է, որ Հեղինե Պետրոսյանի կողմից դատարան ներկայացված բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտման, քանի որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բաբայանի կայացրած որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին:

1.15. 2013թ. հուլիսի 17-ին Վստահորդս ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ներկայացրել է դիմում թիվ 62202513 քրեական գործով Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջի մասին:

1.16. 2013թ. հուլիսի 23-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացվել է պատասխան գրություն, ըստ որի մերժել է տուժողի իրավահաջորդի ճանաչման դիմումը պատճառաբանելով, որ «Հեղինե Պետրոսյանը նույն պահանջով նույնաբովանդակ դիմում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը նաև 2013թ. մայիսի 29-ին, որի քննարկման արդյունքում 2013թ. հունիսի 5-ին կայացվել է «պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ» որոշում (...):»:

1.17. 2013թ. օգոստոսի 16-ին Վստահորդս ներկայացրել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն՝ պահանջելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ. Բաբայանի 05.06.2013թ. պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, և պարտավորեցնել վերջինիս իր վարույթում քննվող թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչել տուժող, Հեղինե Պետրոսյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ:

1.18. 2013թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ դիմում-բողոքը ներկայացվել է քրեադատավարական

օրենքով սահմանված կարգի խախտմամբ ,քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ դիմողը իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը բողոքարկել դատարան:

1.19. 2013թ. դեկտեմբերի 18-ին դիմողներին կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Ա. Բաբայանին ներկայացվել է միջնորդություն թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին տուժող, Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու պահանջների մասին:

1.19.1. 2013թ. դեկտեմբերի 18-ին դիմողներին կողմից դիմում բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, խնդրելով պարտավորեցնել նախաքննության մարմնին Հայկ Մովսիսյանին՝ տուժող, իսկ նրա մորը՝ տուժողի իրավահաջորդ ճանաչել:

1.20. 2013թ. դեկտեմբերի 24-ին վերը նշված միջնորդությանը ի պատասխան ստացվել է պատասխան գրություն, ըստ որի հայտնել են, որ թիվ 62202513 քրեական գործով վարույթն 2013թ. դեկտեմբերի 10-ին կարճվել է: Վկայակոչված գրությամբ մինչդասական վարույթն իրականացնող մարմնի գրության մեջ պարզաբանված չեն եղել բողոքարկման կարգն ու ժամկետները:

1.20.1. 2014թ. հունվարի 11-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից ստացվել է սույն դիմումի 1.19.1. կետում նշված ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմում բողոքը, որը առաջին հասցեատերը մակագրել է ՀՀ ՀԲԾ-ին՝ ում կողմից էլ մերժվել էր դիմումը:

1.21. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը, 2013թ. դեկտեմբերի 28-ին դիմումատուներին կողմից ներկայացվել է դիմում ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետին և քննիչ Բաբայանին՝ պահանջելով տրամադրել 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները:

1.22. 2014թ. հունվարի 22-ին ստացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանի պատասխան գրությունը, ըստ որի հայտնվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարացնելու մասին որոշման պատճենը ուղարկվում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին (...):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննված թիվ 62202513 քրեական գործով դուք չեք հանդիսացել քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ 1-ին մասով նշված դատավարության մասնակից, ուստի քրեական գործով վարույթը կարճելու որոշման և վարույթի կարճման գործի նյութերի պատճենները Ձեզ տրամադրվել չեն կարող:

1.23. 2014թ. փետրվարի 20-ին դիմումատուներին կողմից ներկայացվել է դիմում՝ ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան թիվ 62202513 քրեական գործով՝ Հեղինե Պետրոսյանին դատավարության կողմ ճանաչելու, նախաքննության մարմնին 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

1.24. 2014թ. մայիսի 19-ին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է որոշում դիմումատուներիս դիմումը մերժելու մասին, որի պատճառաբանությունը կայանում է նրանում, որ դատավարության կողմ ճանաչելու պահանջի մասին դիմումը մերժելու մասին քննիչի որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին: Դատարանը գործը լուծել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի շրջանակներում՝ չարամտորեն շրջանցելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը ըստ որի՝ դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենն ստանալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան (...):

1.25. 2014թ. մայիսի 29-ին դիմումատուներիս կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, ըստ որի պահանջվել է բեկանել ստորադաս դատարանի կողմից կայացված ակնհայտ անհիմ դատական ակտը ընդունել նոր դատական ակտ, թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչել տուժող, Հեղինե Պետրոսյանին ճանաչել տուժող Հայկ Մովսիսյանի իրավահաջորդ և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ. Բաբայանին պարտավորեցնել տրամադրել 2013թ. դեկտեմբերի 10-ի թիվ 62202513 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը և կարճված գործի նյութերի պատճենները:

1.26. 2014թ. հուլիսի 4-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չանդրադառնալով դիմումատուներիս ներկայացված բազմաթիվ հիմնավորումներին և պատճառաբանություններին, չպատասխանելով դատարանի առջև բարձացված բողոքի հիմնախնդիրներին, կայացրել է որոշում բողոքը մերժելու մասին, որի «վերաքննիչ դատարանի պատճառաբանություններ և եզրակացություններ» բաժինը ամբողջությամբ և տառացի ստուգման ենթարկվող դատական ակտի պատճառաբանությունների տառացի վերարտադրումն է (տես՝ վիճարկվող որոշման 15-21-րդ էջերը): Դատարանի միակ եզրահանգումը գտնվում է վիճարկվող որոշման 21-րդ էջի 2-րդ պարբերությունում, որն էլ կայանում է հետևյալում՝

«Այսպիսով հիմք ընդունելով դատական ակտում շարադրված իրավական վերլուծությունները համաձայնվելով դատարանի եզրահանգումների հետ, վերլուծելով և գնահատելով նյութերում առկա փաստական տվյալները, վերաքննիչ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու համար, հետևաբար վերաքննիչ բողոքում նշված հիմքերով նյութական և դատավարական օրենքի էական խախտում թույլ չի տրվել, այդ առումով դատարանի որոշումը օրինական է հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ»:

2. Վճռաբեկ բողոքի հիմնախնդիրները

2.1. Արդյո՞ք դատավարության կողմ ճանաչելու պահանջը մերժելու մասին որոշումը վերադաս դատախազին բողոքարկման ենթակա է, թե՛ ոչ:

2.2. Արդյո՞ք այն անձը ում իրավունքներին է առնչվում վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտերով որոնք խախտում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, իրավունք ունի դիմելու տվյալ ակտերի դեմ դատարան, թե՛ ոչ:

2.3. Արդյո՞ք Հ. Մովսիսյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում ընդունված ակտերը առնչվում էին վերջինիս իրավահաջորդ ճանաչվելու մասին դիմում ներկայացրած մոր իրավունքներին ու օրինական շահերին, թե՛ ոչ:

2.4. Արդյո՞ք ստորադաս դատարանի դատական ակտն օրինական էր, հիմնավորված և պատճառաբանված, թե՛ ոչ:

3. Վճռաբեկ բողոքի իրավական հիմնավորումները և պահանջը

3.1. Քրեական դատավարության մասնակից չհանդիսացող անձի կողմից դատարան բողոք բերելու իրավունքը.

3.1.1. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: (...)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև (...) հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր շահերին առնչվող քրեական գործի քննության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...)»:

3.1.2. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է նաև դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը: Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն սահմանված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ իրավունքը ճանաչել է որպես 6-րդ հոդվածի անբաժանելի տարր՝ գտնելով, որ եթե անձը զրկված է դատարանի մատչելիության իրավունքից, ուրեմն իմաստագուրկ է նաև արդար դատաքննության իրավունքը: Այսպես՝ Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ արդարադատության մատչելիության իրավունքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքների անբաժանելի մասն է:

Ընդ որում, այս եզրակացությունը հիմնված է 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության տերմինաբանության վրա, որը մեկնաբանվել է այդ հոդվածի համատեքստում՝ հաշվի առնելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նպատակն ու առարկան, ինչպես նաև իրավունքի համընդհանուր սկզբունքները¹:

Էյրին ընդդեմ Իռլանդիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ուղղված է ոչ թե նրան, որ երաշխավորի տեսական կամ պատրանքային իրավունքներ, այլ որ երաշխավորի կենսագործելի ու արդյունավետ իրավունքներ: Մասնավորապես դա վերաբերում է դատարանի մատչելիության իրավունքին՝ հաշվի առնելով այն կարևոր տեղը, որը ժողովրդավարական հասարակությունում ունի արդար դատաքննության իրավունքը²:

Հիրշհորն ընդդեմ Ռումինիայի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատարան դիմելու իրավունքը բացարձակ չէ և կարող է որոշակի սահմանափակումների ենթարկվել. դրանք թույլատրված են այն կանխադրույթի հիման վրա, որ դիմելու իրավունքն իր բնույթով պահանջում է Պետության կողմից սահմանված կարգավորման առկայություն: Այս առումով Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման, թեև Կոնվենցիայի պահանջների պահպանման կապակցությամբ վերջնական որոշումը կայացնում է [Եվրոպական] Դատարանը: Անհրաժեշտ է հիմնավորել, որ կիրառված սահմանափակումներն անձին վերապահված դիմելու իրավունքն այնպես չեն սահմանափակում կամ նվազեցնում, որ խաթարվի իրավունքի բուն էությունը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի 6-րդ հոդվածի 1-ին մասին, եթե այն օրինական նպատակ չի հետապնդում, և եթե գործադրված միջոցի և հետապնդված նպատակի միջև առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն³:

3.1.3. Վերոնշյալ սահմանադրական, օրենսդրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ դատական պաշտպանության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունք է:

3.1.4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի համաձայն՝ «Դատավարության մասնակիցներ են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին (.....): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը և վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունք է վերապահում նաև կարճված գործի նյութերին ծանոթանալու համար:

1. Stu՝ Golder v. The United Kingdom, 1975թ. փետրվարի 21, գանգատ թիվ 4451/70, 28 և 36 կետեր:

2. Stu՝ Airey v. Ireland, 1979թ. հոկտեմբերի 9, գանգատ թիվ 6289/73, կետ 24:

3. Stu՝ Hirschhorn v. Romania, 2007թ. հուլիսի 26, գանգատ թիվ 29294/02, կետ 50:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենն ստանալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան կամ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման պատճենը չի ստացվել բողոք տալու պահից մեկ ամսվա ընթացքում դիմել դատարան՝ իրեն դատավարության մասնակից ճանաչելու մասին պահանջով:

3.1.5. Շարադրված դրույթների վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը հնարավորություն է տալիս նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձին մասնակցել քրեադատավարական իրավահարաբերություններին⁴, եթե վերջիններս առնչվում են այդ անձի իրավունքներին և օրինական շահերին իսկ դիմողին դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու համապատասխան մերժումը բողոքարկել դատարան առանց վերադաս դատախազին բողոքարկելու:

Սույն բողոքի նախորդ կետում շարադրված իրավական դիրքորոշման հիման վրա կարելի է արձանագրել, որ եթե անձը դատավարության մասնակից չէ, սակայն վարույթն իրականացնող մարմնի ընդունած ակտով խախտվում են նրա իրավունքներն ու օրինական շահերը կամ այդ ակտն առնչվում է նրա իրավունքներին և օրինական շահերին, սպա անձն իրավունք ունի դիմել թե՛ դատարան և թե՛ վերադատության կարգով բողոքարկել դատական ակտը՝ իր իրավունքների պաշտպանության կամ խախտված իրավունքները վերականգնելու համար, իսկ դատարանները պարտավոր են քննության առնել նրանց դիմումները և բողոքները⁵:

3.1.6. ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշման 23-րդ կետում արձանագրել է, որ դատական պաշտպանության հիմնարար իրավունքը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր դատավարության մասնակից չեն, սակայն վարույթն իրականացնող մարմինների ընդունած որոշումն առնչվում է նրանց օրինական շահերին, ենթադրաբար խախտում է նրանց իրավունքներն ու ազատությունները:

Վճռաբեկ դատարանը նույն որոշման նույն կետում արձանագրել է նաև, որ դատավարության մասնակից չհանդիսացող անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացումը պետք է լինի իրական, այսինքն՝ անձն իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտման յուրաքանչյուր դեպքում պետք է դատարան դիմելու և իր խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա:

3.1.7. Սույն գործով դատարանը Հ. Պետրոսյանի ներկայացուցիչներ Ա. Զայանի և Ա. Սաքունցի դիմում բողոքը մերժել է պատճառաբանությամբ, որ մինչ դատարան դիմելը դիմումատուները ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ.Բաբայանի կողմից գրությամբ տրված մերժումները (դատավարության կողմ ճանաչելու և քրեական գործը կարճելու մասին որոշումը տրամադրելու մասին) չէին բողոքարկվել վերադաս դատախազին (սույն բողոքի 1.24. 1.26 կետերը):

Մեջբերված փաստական հանգամանքների վերլուծությունից երևում է, որ դատարանի կողմից դիմումատուներին վերաքննիչ բողոքը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ դատավարության կողմ ճանաչելու պահանջը մերժելու մասին նախաքննության մարմնի գրությունը չի բողոքարկվել վերադաս դատախազին:

4. Տե՛ս Ստեփան Սահակյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԿԴ/0059/11/10 որոշումը:

5. Տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0282/01/09 որոշումը:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները չարամտորեն շրջանցել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը ըստ որի դիմողն իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշումը ստանալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարանում (.....):

Ավելին սույն գործի շրջանակներում դիմումատուներիս կողմից ներկայացվել է մի շարք միջնորդություններ դատավարության կողմ ճանաչելու մասին⁶ մասնավորապես 2013թ. օգոստոսի 16-ին ներկայացված միջնորդությանը մերժելու մասին որոշման դեմ ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազին⁷, որի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Գ.Խ. Երեմյանի կողմից ստացվել է պատասխան գրություն⁸, ըստ որի հայտնվել է, որ (...) համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դիմողն իրավունք ունի իրեն դատավարության կողմ մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճեն ստանալուց 5 օրվա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան: Այսինքն՝ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի մերժման որոշումները դատախազին բողոքարկման ենթակա չեն:

Սույն գործի շրջանակներում ստացվում է այնպես, որ դատավարության մասնակից ճանաչվելու պահանջի մերժման որոշումները ՀՀ դատախազության և ՀՀ դատարանների կողմից քննության ենթակա չեն, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասը սույն գործը քննած դատավորներին առհասարակ հասու չէ:

3.1.8. Սույն բողոքի 3.1.1-3.1.6. կետերում շարադրված իրավական հիմնավորումների լույսի ներքո գնահատելով սույն բողոքի 3.1.7-րդ կետում շարադրված փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ դատական պաշտպանության իրավունքի իրացումը չի եղել իրական, այսինքն՝ Հ. Պետրոսյանը իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ենթադրյալ խախտումները վերականգնելու իրական հնարավորություն չի ունեցել:

Ուստի գտնում ենք, որ Դատարանն իրավասու չէր Ա. Սաքունցի և Ա. Զայանի բողոքը մերժել այն պատճառաբանությամբ, որ վերջիններս դատավարության մասնակից ճանաչելու դիմումները մերժելու մասին գրությունները չեն բողոքարկել վերադատության կարգով:

3.2. Հայկ Մովսիսյանին տուժող լինելու մասին պնդումներ.

Այսպես՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը: Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը (ՀՀ քր. դատ. օր. 58-րդ հոդված):

Տուժողը, ելնելով իր դատավարական կարգավիճակից, քրեական գործի քննության ընթացքում օգտվում է մի շարք իրավունքներից, որոնց իրացումը ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ հնարավորություն ընձեռել տուժող կողմին իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ վերապահված իր իրավունքները:

6. Տես սույն բողոքի 1.16, 1.17, 1.18-րդ կետերը՝ որոնց վերաբերյալ համապատասխան ապացույցները ներկայացվել է առաջին ատյանի դատարան և առկա է գործի նյութերում

7. Տես կից ներկայացվող 4-րդ փաստաթուղթը

8. Տես կից ներկայացվող 5-րդ փաստաթուղթը

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև տուժողի իրավահաջորդի ինստիտուտը, որը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքների և շահերի իրացման, ինչպես նաև դրանց պաշտպանության արդյունավետ երաշխիք է: Նշված ինստիտուտի գոյությունը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով՝ տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և կրում է վերջինիս իրավունքները և պարտականությունները, հետևաբար տուժողի իրավահաջորդն օգտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով ամրագրված տուժողի իրավունքներից և պարտականություններից:

Տուժողի հասկացության վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, ԵԿԴ/0077/11/12 որոշման 25-րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը: Վկայակոչված որոշման 26-րդ կետում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության ընթացքին տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից, նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Տուժող ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը նշված դատավարական ակտի կայացման համար անհրաժեշտ նախապայման է համարում հանցագործության արդյունքում անձին բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառված լինելու կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության հաստատումը, ինչը, սակայն, չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ լինի հանցակազմի բոլոր տարրերի հաստատում կամ վնաս պատճառելու վերաբերյալ սպառիչ տվյալների հավաքագրում:

Վկայակոչված որոշման 27-րդ կետում, ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, արձանագրել է, որ եթե իրավասու պաշտոնատար անձը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու

մասին, ապա նրա ձեռք բերված տվյալները բավարար է համարում հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայությունը հաստատված համարելու համար: Իսկ եթե քրեական գործ հարուցելու փուլում հայտնի է դառնում ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վերջինիս ճանաչել որպես տուժող և ներգրավել գործի քննությանը: Համանման կերպով, քրեական գործ հարուցելու փուլում վարույթն իրականացնող մարմինը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի մերձավոր ազգականներից մեկին պետք է ճանաչի տուժողի իրավահաջորդ, եթե նա այդպիսի ցանկություն է հայտնել:

Սույն պարագայում արդեն իսկ հարուցված էր քրեական գործ, որը ստացել է թիվ 62202513 քրեական գործի հերթական համարը և տուժող Հայկ Սովսիսյանի իրավահաջորդ ճանաչվելու մասին մոր կողմից ներկայացվել էր համապատասխան դիմում, որպեսզի ներգրավվի վարույթում, որպես տուժողի իրավահաջորդ:

Վերը վկայակոչված դատական ակտը թույլ է տալիս պնդելու, որ տուժողի իրավահաջորդ չճանաչելը եղել է նախաքննության մարմնի կամայական և սուբյեկտիվ որոշումը և տվյալ փաստերի ներքո կարելի է պնդել, որ թիվ 62202513 քրեական գործով Հեղինե Պետրոսյանը օրենքով և նրան տրված մեկնաբանությունների ուժով համապատասխանել է տուժողի իրավահաջորդի կարգավիճակին և հետևաբար իրավունք ունի տվյալ վարույթի արդյունքում կայացված որոշումը բողոքարկել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին (.....): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը և վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունք է վերապահում նաև կարճված գործի նյութերին ծանոթանալու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, նրանց պաշտպանների, տուժողի, նրա ներկայացուցչի, (...) կողմից կարող է բողոքարկվել վերադաս դատախազին:

Սույն պարագայում նախաքննության մարմնի կամայական գործողությունների արդյունքում վստահորդս գրկված է տվյալ որոշումը բողոքարկելու իրավունքից:

3.4. Վիճարկված դատական ակտը առհասարակ պատճառաբանական մաս չունեւանու վերաբերյալ պնդումներ

3.4.1. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու (...) համար հավասարության պայմաններում,

արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանի դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված իսկ 4-րդ մասի համաձայն՝ Դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրված բոլոր հետևությունները և որոշումները»:

3.4.2. Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը նպատակ է հետապնդում նպաստել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը, այդ թվում՝ հանցագործությունների բացահայտմանը, անձի, հասարակության և պետության պաշտպանությանը հանցագործություններից: Միևնույն ժամանակ դատական վերահսկողությունն անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է, ինչն էականորեն բարձրացնում է քրեական դատավարության այդ փուլում դատարանների կողմից կայացվող որոշումների իրավական նշանակությունը: Ուստի մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում դատարանների կողմից օրինականությունից շեղվող, չհիմնավորված, չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված որոշումների կայացումն անընդունելի է:

ՀՀ Վճռաբեկ դատարանը իր 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵԿԴ/0058/11/09 որոշման եկել է այն եզրակացության, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված՝ դատավճռին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները վերաբերելի են նաև մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում կայացվող դատական ակտերին (որոշումներին):

3.4.3. Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկլարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

3.4.4. Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի հնարավորությունը՝ լիարժեք դատական ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենքով երաշխավորված արդար դատական քննության իրավունքի խախտման:

3.4.5. Սույն բողոքի նախորդ կետում շարադրված մոտեցմանը համահունչ իրավական դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում՝ ներպետական դատարանների կողմից կայացված որոշումների չպատճառաբանվածությունը կամ ոչ բավարար պատճառաբանվածությունը դիտելով որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի արդար դատական քննության իրավունքի խախտում⁹:

3.4.6. Ուսումնասիրելով վիճարկվող որոշումը կարելի է պնդել, որ դրանում իսպառ բացակայում է պատճառաբանական մասը:

Այսպես՝ 2014թ. հուլիսի 4-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը չանդրադառնալով դիմումատուներիս ներկայացված բազմաթիվ հիմնավորումներին և պատճառաբանություններին, չպատասխանելով դատարանի առջև բարձրացված բողոքի հիմնախնդիրներին, կայացրել է որոշում բողոքը մերժելու մասին, որի «վերաքննիչ դատարանի պատճառաբանություններ և եզրակացություններ» բաժինը ամբողջությամբ և տառացի ստուգման ենթարկվող դատական ակտի պատճառաբանությունների վերաբրտադրումն է (տես վիճարկվող որոշման 15-21-րդ էջերը): Դատարանի միակ եզրահանգումը գտնվում է վիճակվող որոշման 21-րդ էջի 2-րդ պարբերությունում որն էլ կայանում է հետևյալում՝

«Այսպիսով հիմք ընդունելով դատական ակտում շարադրված իրավական վերլուծությունները, համաձայնվելով դատարանի եզրահանգումների հետ, վերլուծելով և գնահատելով նյութերում առկա փաստական տվյալները, վերաքննիչ դատարանը գտնում է, որ առաջին աստիճանի դատարանը սույն գործով դատական ակտ կայացնելիս թույլ չի տվել դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ բողոքը բավարարելու համար հետևաբար վերաքննիչ բողոքում նշված հիմքերով նյութական և դատավարական օրենքի էական խախտում թույլ չի տրվել այդ առումով դատարանի որոշումը օրինական է հիմնավորված ու պատճառաբանված, լիովին համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի պահանջներին, ուստի վերաքննիչ բողոքը պետք է մերժել՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ»:

Մեջբերված դատարանի «պատճառաբանությունը» իր բովանդակությամբ չի բխում վերոնշյալ սահմանադրական, օրենսդրական և կոնվենցիոն դրույթների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից, այն միայն հետևություն է, որը չունի առհասարակ պատճառաբանություն:

3.4.7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Նույն հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝

9. տե՛ս Մալովն ընդդեմ Ուկրաինայի (Salov v. Ukraine) 06.09.2005 թվականի որոշումը, գանգատ թիվ 65518/01, Բոլդեան ընդդեմ Ռումինիայի (Boldea v. Romania) 15.02.2007 թվականի որոշումը, գանգատ թիվ 19997/02, Գրադինարն ընդդեմ Մոլդովայի (Gradinar v. Moldova) 08.04.2008 թվականի որոշումը, գանգատ թիվ 7170/02 :

դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ դատավճռում խախտ բացակայում է դրա նկարագրական-պատճառաբանական մասը:

4. Հիմք ընդունելով սույն բողոքի 3-րդ գլխում շարադրված վերլուծությունը՝ գտնում ենք, որ, սույն գործով ստորադաս դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հիմք են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. հուլիսի 4-ի որոշումը բեկանելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

5. Վերաքննիչ բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404, 406, 407, 412 և 414² հոդվածների պահանջները

խնդրում եմ՝

վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ, բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. հուլիսի 4-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր կազմով քննության:

Կից ներկայացնում եմ՝

1. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. հուլիսի 4-ի որոշման պատճենը,
2. վճռաբեկ բողոքի օրինակը, դատական ակտ կայացրած դատարանին, ՀՀ հատուկ քննչական ծառայությանը և ՀՀ գլխավոր դատախազությունն ուղարկելու վերաբերյալ փոստային կտրոնների պատճենները,
3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014թ. հուլիսի 4-ի որոշումը 2014թ. հուլիսի 9-ին ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը:
4. 2013թ. օգոստոսի 16-ին ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված դիմում-բողոքի պատճեն,
5. ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Գ. Խ. Երեմյանի 2013թ. օգոստոսի 22-ի պատասխան գրության պատճեն:

Դիմողի ներկայացուցիչներ՝

 Ա. Սաքունց

 Ա. Զալյան

17. 07. 2014թ.